



# Գ Ա Ղ Ո Ւ Թ Ա Յ Ա Յ Կ Յ Ա Ն Ք

ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԱՐԵԳԻՆ ԱՒԻ ԿՈՆԴԱԿԸ

ԳԱՐԵԳԻՆ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԸՆՏՐՈՒԹԵԱՄԲ ԱԶԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊՈՍՏՈՅ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ, ՇՆՈՐՀՔ, Ս ԷՐ, ԽԱՂԱՂՈՒ-ԹԻՒՆ Ի ՏԵԱՌՆԷ ԵՒ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՈՂՋՈՑՆ Ի ՄԷՆՋ

Սիրեցյալ ժողովրդայն Մերում որ ի կր-  
բանան և ի Սուրբա:  
Հայտնի է ամենքիդ որ Սոսվետ Հայաս-  
տանի կառավարութիւնը որոշել է սփյուռ-  
քի մեջ ցրված հայութեան բեկորները ըստ  
հնարավորութեան հավաքել հայրենիքի մեջ:  
Դյուրին չէ տասնյակ և հարյուր հազարա-  
վոր հայեր աշխարհի ամեն ծայրերից ըն-  
դունիլ Հայաստանի սահմանների մեջ, հոգալ  
նրանց փոխադրութեան ծախսերը, բնակա-  
րաններ պատրաստել և տեղավորել, գործ ու  
ապրուստի միջոցներ հայթաթել մինչև կը  
լծիլն բնականոն կյանքի և աշխատանքի:  
Այս որոշման գործողութիւնն ու իրագոր-  
ծումը կապված է անթվիլի մեծ ծախսերի և  
ընդարձակ աշխատանքի հետ, որի մասին  
երևակայութեամբ դժվար է իրական և ամ-  
բողջական գաղափար կազմել:

Բնականաբար սփյուռքի հայութիւնն էլ  
յուր պարտախախտութիւնն ունի յուր եղ-  
բայրներին ու քույրերին օգնութեան հասնե-  
լու, որքան և փոքր լինի այդ օգնութիւնը  
ընդհանուր ահավոր ծախսերի համեմատու-  
թեամբ: Քիչ չեն լինի այդ ներգաղթողների  
մեջ այնպիսի ընտանիքներ, որոնք աղքա-  
տութեան երեսից հնարավորութիւն չեն ու-  
նենա հողալ այն անհրաժեշտ ծախսերը,  
որոնք կապ ունին տեղափոխվողների  
սկզբնական հոգսերի հետ: Մեր պարտա-  
կանութիւնն է հատկապես այդպիսիների  
անուշով եղբայրական օգնութեան ձեռք  
մեկնել:

Հայ Բարեգործական Ընդհ. Միութիւնը  
բարի և հայրենասիրական միտքն է հղացել  
մի միլիոն տ լարի հանգանակութիւն սկսել  
սփյուռքի մեջ ներգաղթողների եղբայրական  
օգնութեան գործին: Կարգադրված է յուր  
յուր ճյուղերին, որոնց թվում և կիբանանի  
ու Սուրիո ճյուղերին, կազմակերպել այդ  
գործը: Որպեսզի խաշաձեութիւնն ու դժվա-  
րութիւնն շատեղծվի, նույն տեղում և նույն  
նպատակով տարբեր հանգանակութիւններ  
կատարելու, որ միայն շփոթութիւն կարող  
է ստեղծել ժողովրդի մեջ, բանավոր է հա-  
մարված կենտրոնացնել այն Բարեգործա-  
կանի Վարչութիւնների ձեռքում, Մեր ընդ-  
հանուր հովանաւորութեան տակ, իբրև եղ-  
բայրական օգնութեան գործ:

Այս բացատրութիւնից հետո, Մեր հայ-  
րական հորդորն է Կիլիկիո Կաթողիկոսու-  
թեան բոլոր թեմերի մեջ նույն նպատակով  
կատարվելիք հանգանակութիւնները հավա-  
տալ Բարեգործականի ճյուղերին, որոնք ժո-  
ղովրդական այլ և այլ խավերի ներկայա-  
ցուցիչների հետ հանձնախումբեր կազմելով  
գործի կանցնին Մեր Թեմերի մեջ: Անշուշտ  
մեր օգնութիւնը շատ փոքր կլինի կարիքի  
համեմատութեամբ, բայց կատարած կլինինք  
մեր պարտավորութիւնը հնարավորութեան  
սահմանների մէջ դեպի հայրենիքը և ազգա-  
հավաքման նվիրական գործը: Կառաջարկենք  
այս կոնդակը կարգալ եկեղեցիներում, իսկ  
հայ թերթերին հրատարակել իրենց էջերում  
ի գիտութիւն ժողովրդայն:

ԿԱԹՈՂԻԿՈՍ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԳԱՐԵԳԻՆ Ա

Տուա կոնգակս ի թուականիս մերում ՌՅՂԸ  
ի 23 յունիս ամսոյ 1946 ամի  
յԱՆԹԻՂԱՍ

### ՀԱՅԵՐԻ ՇԵՐՔԱԿԱՆ ԽՄԲԻ ՄԵԿՆՈՒՄԸ ՍԻՐԻԱՅԻՑ ՈՒ ԼԻԲԱՆԱՆԻՑ ԴԵՊԻ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

**ԲԵՅՐՈՒԹ, 13 սեպտեմբերի (ՏԱՍՍ).—** Երեկ Բեյրութի նավահանգստից դուրս եկավ սովետական «Վյաչեսլավ Մոլոտով» ջոզենավա, որի վրա կային Սիրիայից ու Լիբանանից Սովետական Հայաստան մեկնող 2.417 հայ: Նրանց ուղևորելու էին եկել հազարավոր հայեր, որոնք ժամանակավորապես մընում են Լիբանանում և սպասում մեկնելու

իրենց հերթին: Մեկնողները խանդավառ տրամադրությամբ մեջ էին: Նրանք երգում էին հայկական սովետական երգեր: Նավի վրա բարձրացրված էին բազմաթիվ կարմիր դրոշներ, հայերեն ու արաբերեն լոզունգներ: Սովետական Հայաստանի հիմնի հնչյունների տակ շողենավը հեռացավ Բեյրութի նավահանգստից:

### ՀԱՅԵՐԻ ՍԻ ՆՈՐ ԽՄԲԻ ՄԵԿՆՈՒՄԸ ՍԻՐԻԱՅԻՑ ԵՎ ԼԻԲԱՆԱՆԻՑ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

**ԲԵՅՐՈՒԹ, 28 սեպտեմբերի (ՏԱՍՍ).—** Մեպտեմբերի 27-ին Սիրիայից և Լիբանանից մշտական բնակչության համար Սովետական Հայաստան են մեկնել 6.000 հայեր: Բեյրութի նավահանգստում մեկնողներին ճանապարհ էին դնում ավելի քան 20 հազար մարդ: Հրաժեշտի այցելության համար ջոզենավ էր ժամանել Մերձավոր Արևելքի հայ անկեղեցու ղեկավար Գարեգին առաջին

կաթողիկոսը: Աղևորման համար ժամանել էր նաև Լիբանանում ու Սիրիայում սովետական ղեսպանորդ ընկ. Սողոթը:

Տեղական ժամանակով ժամը 18-ին սովետական «Ռոսիա» ջոզենավը հարյուրավոր նավահանգիստի ուղեկցությամբ Սովետական Հայաստանի հիմնի հնչյունների ներքո մեկնեց Բեյրութի նավահանգստից:

### „ՎՅԱԶԵՍԼԱՎ ՄՈԼՈՏՈՎ“ ՇՈԳԵՆԱՎԸ ՏԱՐԱՎ ՆԵՐԳԱՂԹԻ ՅՐԴԻ ԵՎ ՎԵՐՋԻՆ ԿԱՐԱՎԱՆԸ ՊՈՒԼԿԱՐԻԱՅԵՆ

**Շաբաթ, 28 սեպտ. կես գիշերին** Վառնայի նավահանգիստը խորհախեց «Վյաչեսլավ Մոլոտով» հսկա ջոզենավը, Բուրգասեն առած 500 ներգաղթողներով: Տեղվույս ներգաղթի կոմիտեի և «Երևան»-ի մասնաճյուղի անդամներու և մեր երիտասարդներու կազմբուռն բազուկներու աշխատանքին շնորհիվ, թերնիքական և մատակարարման գործը կարճ ժամանակման մեջ ի գլուխ հանվեցավ ու ջոզենավը հաջորդ կիրակի օրը Վառնային մեկնող 200 ուղևորներն ալ հավանքած էր արդեն:

**Օրկուշաբթի, 30 սեպտ. 1946-ի** առավոտուն Վառնայի հայրությունը անկեղեցվո բակը կհամախմբվեր ու թափոթը ճամբա կելլե օրվան պատշաճ լոզունգներով, կարմիր դրոշակներով և Ստալինի, Տիմիտոևի, Միկոյանի մեծադիր նկարներով: Թափոթը քարափ կմտնե ջոզենավի կամրջակին վրա խոնաված ներգաղթողներու ծափերու տարափին տակ:

Հոն են մեր հարգելի լրագրող պատվիրակները՝ ընկերներ Խրիմլյան, Օթարյան, Ինժ. Ավետիսյան, Կիզը, Վարչության կողմն ընկ. Կ. Գուրպանճյան և Գեր. Տ. Գր. Ս. Կարապետյան: Տեղական կոմիտեի կողմն Կ. Էլմաճյան խոսք տվավ կոմիտեի ներկայացուցիչ ընկ. Կուրպանճյանի, որ ոգևոր ճառ մը խոսեցավ: Խոսք կառնե Բանվորական կուսակցության կողմն երեսփոխան Բենեվ, որ երկու քույր ազգերու միջև սերտ գործակցություն կթելարե: Վերջին խոսքը ընկ. Ա. Խրիմլյանինն է, որուն շինիչ և խրատաբանական կոչերուն տակ ջոզենավի սանդուղը կը քակուի, զինվորական ֆանֆատը կնվագե, թաշկինակներ կճոճին և Վառնային նվիրված Ստալինի ու Տիմիտոևի նկարները, և հայերեն ու պուլկարերեն լոզունգները ճակտին ջոզենավը կհեռանար 700 զաղթականներով, փակելով 1946 տարվան ներգաղթի ճեռնարկը:



### ՈՒՒԼԻԱՄ ՍԱՐՈՅԱՆՆ ԻՐ ՄԱՍԻՆ

Թեև ես գրում եմ անգլերեն, և թեև ծնունդով ամերիկացի եմ, բայց ես ինձ համարում եմ հայ գրող:

Իմ գործածած բառերը անգլերեն են:

Միջազգայրը, որի մասին ես գրում եմ, ամերիկյան է:

Ոգին, սակայն, որ մղում է ինձ գրելու, հայկական է:

Ուստի ես հայ գրող եմ:

Ես խորապես սիրում եմ հայ գրողների մեծ ընտանիքին պատկանելու: Կատարելով: Իսկ հպարտ եմ հայ ժողովրդի ազնվությունը, արիությունը, հմայակալանությունը, ուժովն ու պարզությունը, սրամտությունը, նրա հանձարով ու խիզախությունը:

Այս բարեմասնությունները ժառանգություն են բոլոր ճշմարիտ հայերի:

Նրանք անուցանել են իմ ոգին հենց սկզբից, և ես երախտապարտ եմ:

Աշխարհն երբեք չի կարող պարտության մատնել մի ազնիվ ժողովուրդ:

Վաստակավոր ապրելու տենչը. հզոր է հայի մեջ:

Հայաստանի ուժը թվի մեջ չէ, այլ մարդ անհատի սրտի մեջ: Մա՛ է միակ իրական ուժը, որ մարտիկ, մարդիկ իբրև անհատներ, կարող են ունենալ:

Թվերի մեջ եղած ուժը ստորագաս է և անարժեք: Անասնական ուժ է: Անարժան քաղաքակիրթ մարդ էակի համար: Ինչ նա անում է, անարժեք է մարդու վայելուչ ու բարի զարգացման պատմության մեջ:

Գալիք տարիներին, նույնիսկ երբ աշխարհը վայրագանա, հայր պիտի լինի հավատարիմ հոգեկան այն օրենքներին, որոնք նրա ժառանգականությունն են կազմում:

Մենք պիտի աճինք: Ո՛չ թե թվեգրով: Ո՛չ թե աշխարհն անիմաստ կերպով լեցնող մարդկային էակներով: Այլ իրենք իրենց ցեղը, իրենց ժառանգությունը, ազնիվ ու բեղուն կյանքով ապրելու իրենց պարտականությունը գիտակցող անհատներով: Մենք պիտի աճինք մարդկանցով, որոնք ժամանակ չեն վատնում աշխարհի համար:

Ազնիվ ծնված մարդիկ արժանի են ավելի լավ աշխարհի, քան այս աշխարհը:



Ուիլիամ Մառոյան

Լավ աշխարհը, սակայն կստեղծվի մարդկանց ձեռքով:

Հայի ոգին հզոր ոգի է: Նա չի պարտված չար աշխարհից: Ընդհակառակը նա պարտության է մատնում չար աշխարհին: Նա այդպես է անում հայտնաբերելով այդ աշխարհը իրեն համար և մնալով անկեղծ նրան: Ես հավատում եմ, որ մարդու քաղաքացիությունը հավատում եմ, որ մարդու ճակատագիրը ազնվական ճակատագիր է: Ես ասում եմ այն տուժելը, որոնք ձգտում են կործանել մարդու ազնվությունը:

Ես հայ եմ:

Ես գրող եմ:

Աշխարհի ապակամաված ուժերի դեմ իմ գենքերն են՝ անաղաքտ աչքը, պարկեշտ միտքը, մաքուր սիրտը, որոնք մղում են ինձ գրելու:

Թարգմ. Ս. Վ.

(Եվրոպական թիվ 202, 1946 թ., Թեհրան)

### ԱՐՍԼԱՆՅԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԹՈՒՆԵՐԸ

Կ. Պոլսո Պատրիարքական Տեղապահի երեք թոռները՝ Վահագն՝ շուրթակահար, Վա-

րուժան՝ դաշնակահար և Վարդան՝ թավջութակահար, նվագահանդես մը տված են 9 մա-

յիսին խոսենքամ բազմութիան մը առջև: Երկր կը ըլլան Հայ և Հայ կաթողիկ կղերին կարգին Միտիթարյան մեծավոր Հ. Հմայակ

Մ. Վրդ. Համբարյան, արվեստագետներ և քննադատներ (Վերստասարդ Հայաստան» թիվ 30, 1946 թ., Նյու-Յորկ)

„ԿՈՄԻՏԱՍ“ ԿԱՐԺԱՊԱՏԿԵՐԸ ՖՐԵԶՆՈՅԻ ՄԵՋ

Ասիկա երկրորդ շարժապատկերն է արտադրված Հայկիփուտի մեջ, որ քրտուն ֆրոտուէլընը մեզ կհրամայեն: «Կոմիտաս Վարդապետի կյանքն ու ներգերքը խոսուն շարժանկարը կարճ, բայց գրավիչ ժապավեն մ' է:

Կոմիտասյան սիրուն երաժշտութեան մը արթններուն խորհրդավորութեան մեջ ահա երևան կուգա համեստ հայ տան մը հյուրատենյակը, ուր դաշնակին առջև փոքրիկ աղջնակ մը իր փորձերը կընեն: Նախանձախնդիր մայրը, որ կուսկնդրե իր զավկին,

երբ հերթը կուգա հայ երգին, մանավանդ Կոմիտասի ստեղծագործութեան, առաջ կուգա ու զգացված՝ բացատրութիւններ կուտա Կոմիտասի հորինած երգերուն մասին: Ու այդ առիթով մայրը իր աղջկան կպատմե տարաբախտ Վարդապետին կյանքը, նկարագրելով անոր ոգորումները երգահավաքութեան մեջ, անոր սքանչելի համերգները մեծ մայրաքաղաքներու մեջ, հուսկ հետո անոր արքունի ու բանտը, որում հետեանքով դալլալուց սոխակը կդառնար կենդանի մեռելով մը մինչև իր մահը:

Պատմութեան ընթացքին Կոմիտասի կյանքն է, որ կտեսնենք: Խնամքով պատրաստված տեսակ մը համերգ է ան, որ կլսենք ու կտեսնենք փոխն ի փոխն երգված, դաշնակի և խմբական երգերիցով: Կոմիտասի միջոցով:

Գրավիչ տեսարաններ են վար ու ցանի և դաշտային այլ աշխատանքները, որոնց վրա հիացմամբ նայող և հայ փեղջուկին տնկնդիր Վարդապետը անոնց քաղցրիկ խաղերն է, որ կհավաքե մեծ տենչով ու փափաքով:



Պր. Ս. Վարդյան, որպես Կոմիտաս Վարդապետ, վայելչորեն կներկայացնե զայն: «Կալի հորովն»-ը, «Ալազազ»-ը տպավորիչ են, որոնք շարժանկարին ընձեռած առավելութեանը վրա գեղեցիկ պատկերներ կդառնան: Ո՛րքան մեծ վայելք է տեսնել արտն ու կալը, սարն ու մարմանդը, որոնց վրա ինքն աշխատող հոգին իր երգերը կհյուսե և կերգե:

Բաժին տունող արվեստագետներին շատեր մեզ անծանոթ են, բայց անոնցմե յուրաքանչյուրը իր լավագույնն ջրած է խաղին հաջողութեան համար: Երգիչ Պարդե Հյուսյան բաժին առնողներն մին է, իսկ Տիկ. Զարուհի էլ մասյան Վարդյան մեծ սատարն է համերգին:

Պրն. Զարլս Մերձանյան, որ արտադրողն է այս և «Անուշ» շարժանկարներուն, ներկա ըլլալով հետաքրքրութեամբ կհետևի բազմութեան կարծիքներուն և թելադրութեանց:

Թ. Գ. Ա. Ի. Յ. (Նոր օր», մայիս 9 1946 թ. Ֆրեզնո) -

ԼԱՏԻՆԱԿԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՒՄ ԵՆ ՄԻՏԻՆԳՆԵՐ ՊԱՇԱՆՁԵԼՈՎ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼ ԹՅՈՒՐՔԻԱՅԻ ԼԾԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՀԱՅԱԿԱՆ ՀՈՂԵՐԸ

ՄՈՆՏԵՎԻԴԻՆՈ. 19 օգոստոսի (ՏԱՍՍ).— Մոնտեվիդեոյում տեղական հայկական կոմիտեն օգոստոսի 18-ին կազմակերպեց մեծ միտինգ, որի մասնակիցները պահանջում էին ազատագրել Թյուրքիայի իշխանութեան

տակ փոխվող հայկական նահանգները և զրբանք միացնել Սովետական Հայաստանին: Միտինգը հեռագիր տղարկեց Փարիզի փառազուրկ կոնֆերանսին, որով Ուրուգվայի հայերը խնդրում են Հայաստանին վերա-



դարձնել թյուրթիայի լծի տակ գտնվող հայկական վաղեմի հողերը: Ստացված հարողորհարությունների համա-

ձայն միաժամանակ նման միտինգներ են անցկացրել Արգենտինայի և Իրազիլիայի հայկական կաղմակերպությունները:

### ԱՄԵՐԻԿԱՆ ՀԱՅԵՐԻ ՊԱՀԱՆՋԸ

ՆՅՈՒ-ՅՈՐԶ, 14 սեպտեմբերի (ՏԱՍՍ).— Ամերիկայի Հայկական ազգային խորհուրդը շարունակում է եռանդուն կամպանիա անցկացնել հայկական հողերը թյուրթիայան լծից ազատագրելու և հայրենիք վերագարձող հայերին օգնելու համար: Խորհուրդը լույս է ընծայել մի բրոշյուր. «Ի՞նչ են ցանկանում հայերը» վերնագրով, որի մեջ տրվում է Հայաստանի սլատուբյան համառոտ ակնարկը՝ սկսած հնագույն ժամանակներից: Բրոշյուրում նշվում է հայերի հերոսական պայքարը իրենց ռեսպուբլիկան ստեղծելու

համար և նկարագրվում են սովետական հայերի սիրահարժությունները համաշխարհային երկրորդ պատերազմի ժամանակ: Բրոշյուրը նշում է, որ Սովետական Հայաստանը ներկայումս հանդիսանում է ծաղկուն երկիր, բայց նրա հողը հազիվ է բավականացնում բնակչությանը, մինչդեռ թյուրթիայի կողմից զավթած հայկական հողերը ներկայումս անմարդաբնակ և ամառի են: Բրոշյուրում նշվում է նաև, որ հայերը պահանջում են միայն արդարություն, այն է վերամիավորել վաղեմի հայկական հողերը:

### Հ Ա Յ Ո Ց Ն Շ Ա Ն Ա Կ Ա Լ Ի Յ Թ Ա Փ Ո Ր Ը

Հուլիսի 14-ին Ֆրանսայի Կղզային մեծ Տոնին առաջին անգամն ըլլալով մասնակցեցան օտար ազգերու ժողովուրդներ, որոնց կարգին էին Հայերը:

Տոնակատարությունն իր էությունը փառաշուք էր:

Ժամերով հոսող թափոսներուն մեջ Հայկականը ամենն աչքառոճ, ամենն պատկերալիցը և ամենն լավագույնն էր: Դիտող միլիոններու ոգնկոշող դրդագին ծափահարություններուն ի տես Հայերս իրավ որ հպարտացանք:

Ֆրանսական նուագույններով զարդարուն մեծ ինքնաշարժ մը, որ կկրեր Հայկական բնիկ տարազներով հափնված գեղընտիր Հայ աղջիկներ և պատանիներ, Հայ արվեստի էն հրապուրիչ զարդարանքներուն մեջ ծփացող Հայուհիները գարնան թիթեռնիկներու հմայքով կարծես կթևածին դեպի ազատություն, դեպի՝ անկախություն հանգրվանները իրենց ընկերացնելով Ֆրանսայի ազատության անվեհեր ոգին...: Հայաստանի

սիրտը կազմող այս պանծալի թապուին կհետևեր 500 Հայերու թափորը գեղեցիկ վերտառություններով, որոնք որ հրապարակե և որ պողոտայն որ անցան՝ արժանացան բուն ծափահարություններու: Ֆրանսահայ Ազգային ճակատը կրնա հպարտանալ իր այս փառավոր պատրաստություններով, որովհետև Հայկական թափորը իր տեսակին մեջ անմասն և անգերազանցելի էր:

Պասթիեն մինչև Հանրապետության Հրապարակը դրդագին ծափողոյններու հետ «Կեցցե Հայաստան», «Կեցցե Հայերը» բացականչություններ իրար հաջորդող ալիքներու նման բարձրացան, բան մը, որ առաջին անգամն էր, որ կլավեր Փարիզի հրապարակներուն վրա: Այդ օրը մենք հպարտացանք և ապրեցանք:

Հայոց թափորը Հայկական Հարցի լավագույն պրոպականդան հանդիսացավ: Պատիվ կազմակերպիչներուն:

(«Նրիտասարդ Հայաստան» թիվ 29, 1946 թ.)

### ՀԱՅԵՐԸ ԷՎԵՐԵԿԻ ՄԵՋ

Էվերեկ-Ֆենեսեի մեջ ներկայիս կգտնվին 130 հայ ընտանիք, որոնք իրենց սրտուն արհեստը, խանութը և զբաղումը ունին: Էվերեկի մեջ կան 8, իսկ Ֆենեսեի մեջ ալ 20 տուն չքավորներ, որոնց երբեմն Ամերիկայի Ռուբինյան և Մեսրոպյան Հայրենակցական Միությունները կնպաստեն: 25-ի

ավելի տղաքներ կհաճախեն պետական դպրոցներ: Էվերեկ-Ֆենեսեի հովիվն է Նդիշե քահանա Քազվորյան: Իսկ Կեսարիո Առաջնորդական Փոխանորդ Հայկազուն Հ. քհն. Կարապետյան:

(«Նրիտասարդ Հայաստան» թիվ 30, 1946 թ.)